# ԱՂՋԻԿՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

## Ե՞ՐԲ Է ՍԿՍՎՈՒՄ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

- Աղջիկների շրջանում սեռական հասունացման սկիզբը մոտավորապես 10,5 տարեկանն է, սակայն նորմալ է համարվում 8-ից մինչև 12 տարեկանը:
- Սեռական հասունացման ժամկետների վրա ազդում են ժառանգականությունը, ընդհանուր առողջական վիճակը, ավելորդ կամ անբավարար քաշը և այլն:

## Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԿԱՏՎՈՒՄ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

- Հասունացման առաջին նշաններից են կրծքագեղձերի մեծացումը և/կամ թևատակերի և սեռական օրգանների շրջանի մազակալումը:
- Աճի թռիչքը տեղի է ունենում կրծքագեղձերի մեծացումից կարճ ժամանակ հետո:
- Առաջին դաշտանը սկսվում է դեռահասության սկզբից մոտ 2-2,5 տարի հետո և աճի թռիչքից մոտ կես տարի անց:
- Առաջին դաշտանից 6-12 ամիս առաջ կարող է նկատվել սպիտակավուն, առանց հոտի, թույլ արտադրություն հեշտոցից, այսպես կոչված լեյկորեա, ինչը նորմալ երևույթ է:

## Ի՞ՆՉ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Կորյակներ (ակնե),
- Սկոլիոզ,
- Անեմիա և արգանդային անկանոն արյունահոսություններ,
- Կարճատեսություն,
- Հոգեբանական և էմոցիոնալ փոփոխություններ,
- Դեպրեսիաներ և ռիսկային վարքագիծ:

## ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՑԻԿԼԸ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՆՈՐՄԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝

- Առաջին դաշտանի տարիք՝ 12-12.5 տարեկան
- Ցիկլի տևողություն 20-ից մինչև 45 օր՝ միջինում 32 օր
- Դաշտանի տևողություն՝ մինչև 7 օր
- Օրվա ընթացքում օգտագործվում է 3-6 միջադիր

## Ե՞ՐԲ ԴԻՄԵԼ ՄԱՆԿԱԲՈՒՅԺԻ

- Եթե մինչև 8 տարեկանը նկատվում է կրծքագեղձի մեծացում
- Եթե 13 տարեկանում կրծքագեղձերը դեռ չեն մեծացել
- Եթե 15 տարեկանում դեռ չի սկսվել առաջին դաշտանը (առաջնային ամենորեա)
- 3 ամիս դաշտանի բացակայություն ռեգուլյար դաշտաններից հետո կամ 6 ամիս դաշտանի բացակայություն ոչ ռեգուլյար դաշտաններից հետո (երկրորդային ամենորեա):

## Ի՞ՆՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻՆ

- Մանկաբույժի զննումներ՝ զարգացման գնահատում և հնարավոր խնդիրների հայտնաբերում,
- Արյան քննություն՝ անեմիայի սկրինինգ,
- Տեսողության ստուգում՝ տեսողության խնդիրների վաղ հայտնաբերում,
- Փայտացման և դիֆթերիայի դեմ կրկնապատվաստում,
- Մարդու պապիլոմավիրուսի դեմ պատվաստումներ՝ քաղցկեղի 6 տեսակների (բերանի խոռոչի և կոկորդի, արգանդի պարանոցի, վուլվայի, հեշտոցի, հետանցքի) կանխարգելման համար: